4,000 զօրեղ կանթեղներ պիտի չհակակշռէին զարեգակն։ Այսպէս, այդ գիտնականը կրցած է աղէկցնել լէ–բէ–օը, մարթային այն աղատ հիւանդութիւնը, լուսաբուժութեամբ, երկու ժամու մէջ։ Յաղթանակ մ'է այս որ կ'խոստանայ բարերար արդիւնքներ, եթէ ի նկատ առնուին հիւանդութեան այն զարհուրելի յամառութիւնն որ բուժականութեան զինարանին բոլոր խորագիտութիւններն ի դերեւ կ'հանէ։ Ըսենք միայն թէ արուեստական լոյսով արեւը փոխանակելու ընտիր գիւտը Տանիմարքցիինը չէ. ազոր հայրութիւնը գործնական, մի՛չտ գործնական Եանքիինն է։ Լուսաբուժութիւնն ո՛չ առաջէն լաւագոյնս կ'յարմարի անոնց ղեւացոյ, տենդոտ կեանքի պահանջմանց։ Անոնք արեւը փոխանակեցին իր նուազականոփն՝ ելեկտրականու–

# ՊԱՏԵՐԱԶՄ

## ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՕՍՄ. ՁԻՆՈՒՈՐՔ.—Վեհ. Սուլթանն իմանալով որ հելլէն սահմանագլխոյն վրայ գտնուող օսմ. զինուորներէ ոմանք Սքորպիւդ հիւանդութեան ենթարկուիր են, հրամայեց քննութիւն կատարել եւ զինուորաց բանջարեղէն տալ։ Կատարուած քննութեամբ հաստատուեցաւ թէ Սքորպիւդ հիւանդութիւնը գոյութիւն չունի, այլ լինտերու բորբոքում, այն ալ հարիւրին չորս համեմատութեամբ, որ կարեւորութիւն չունի։

ՕՍՄ. ՀՊԱՏԱԿՆԵՐ. — Բ. Դուռը գրած էր հարկ եղած տեղերը տեղեկագրել թէ օսմ. հպատակները պատերազմի պատճառաւ ծովու եւ ցամաքի

…

պատասխանեն պատասխաններու յարձակմանց։

ԲԵՏԵՐՍՊՈՒՐԿ.—Ջարը մխիթարական խօսքերով նամակ մ'ուղղեցերկիսս թագուհին նամակին ի պատասխան եւ յայտնեց թէ Աթէնքի դաշնիճը պէտք է գիւրութիւն ընծայէ, որպէս զի Տէրութեանց ջանքերն արդիւնաւոր ըլլան։

ՏՈՄՈՒՕ. — Կ'հերքուի էֆէնդի այն լուր թէ սահմանագլխոյ օսմ. զինուորք հելլէն բանակեալն անցած ըլլան։

ՎԻԵՆՆԱ. — Իբրեւ ստոյգ կ'ըսուի թէ Յունաստան ընդունեց է պատերազմական տուգանքը։

# ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻՈՅ Երեսփ. ժողովոյ մէջ անցեալ Եչ. գաղթային նախարար Մր.

…

րին Նեղոսի Թարփիլնաւերու նաւատորմիկին հրամատար կարգեց զՄր. Քոլին Քէբըլ, նախորդ հրամատար Աղեքսանդրիոյ անգլ. հարբէլը պահականաւուն։ Այս նաւատորմիկ ցամաքի զօրախմբոց պիտի գործակցի Տէրվիշներուն դէմ։ Սուաքիմի ճամբով լուր առնուած է թէ Ապու-Համէտի և Պէրպէրի մէջ Տէրվիշներէ բազմութիւ անձինք դասալիք կ'ըլլան։ Ապահով կը նկատուի թէ եգիպտական բանակը Պէրպէր հասնելէ առաջ ընդդիմութեան պիտի չհանդիպի։ Պէրպէրի շրջակայքը՝ եգերական ցեղեր արդէն անգլեւեգիպտական բանակին կողմն անցեր են և մեծապէս պիտի նպաստեն Տէրվիշներու հաղորդակցութեանց գիծը խզելու։ Ապու-Համէտի յարձակումն առ այժմ յուլիս 18/30ին որոշուած է։ (Տե՛ս Ա. երես)։

ՀՆԴԿԱՍՏԱՆ.—Բունայէ նոր լուր չկայ։ Սահմանագլխոյ կողմերը Թոչիի

…

# ՀԵՌԱԳԻՐԵՐ

## ԱՅՍ ԱՌՏՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐԵՐ

## ԹՈՒՐՔ ԼՐԱԳՐԱՑ ՀԵՌԱԳԻՐԵՐ

## Տ Ո Ւ Ա Ր Ա Ն

…

ՏՊԱԳԻՐ
ՏԻՐԱՆ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ
ԿԱՍՏՈՒՐԱՆԴ ԵՒ ՎԻՐԱԲՈՅԺ
Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէսօրէն վերջ իր բնակարանը, չէնի փողոց, թիւ 40։ 15–14

